

<https://doi.org/10.46991/hc.2024.21.1.218>

The Life of the Artist Masis Armen Bakhadoryan and His Still Lifes

Levon Chookaszian

<https://orcid.org/0009-0006-8498-6445>

YSU Chair of Art History and Theory, Doctor of Arts, Professor, Member of the Ambrosian Academy in Milan (Italy), Corresponding Member of the Montpellier Academy (France)

levonch@yahoo.com

Keywords: Masis Armen Bahadorian, exile, Genocide, College Murad Raphaelian, Chicago, Arnold Turtle, Paula Bahador, still life.

Masis Armen Bahadoryan or Armen Bahadur is one of those artists who, due to the will of circumstances, remained in the shadows and was forgotten. He is completely unknown in the Armenian Diaspora and in Armenia. He is an Armenian who earned his living by dentistry, but never parted with the brush and palette and created many paintings, executed with professional skill and refined taste. It can be said that medicine was a means of existence for him, and painting was spiritual food. Unfortunately, only a few artistic articles devoted to him and which are at our disposal have been preserved, either very little was written, or they simply were not preserved. Mostly in the memories of relatives and friends of the family there is information about Massis Armen Bahadorian. His paintings that have come down to us testify to his achievements in the field of painting.

Նկարիչ Մասիս Արմեն Բահադորյանի կյանքն ու իր նատյուրմորտները

Լևոն Չուկասզյան

ԵՊՀ արվեստի պատմության և տեսության ամբիոն, պատմության ֆակուլտետ,
արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, Միլանի (Իտալիա) Ամբրոզիան ակադեմիայի անդամ,
Մոնպելյեի (Ֆրանսիա) ակադեմիայի թղթակից-անդամ

Հիմնաբառեր՝ Մասիս Արմեն Բահադորյան, տարագրություն, եղեն, Սուրադ Ռաֆայելյան վարժարան, Շիքագո, Առնոլդ Թաթլը Պատուհ Բահադոր, նատյուրմորտ:

History and Culture Vol.-21(1), 2024, pp. 218-234



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Received: 07.06.2024

Revised: 09.07.2024

Accepted: 31.08.2024

© The Author(s) 2024

Հայ ժողովրդի ծոցից ելած հազարավոր արվեստագետների անունները, կենսագրական մանրամասները և ստեղծագործությունները թաղված են մոռացության ավազների տակ: Անթիվ, անհամար միջնադարյան նկարազարդ ձեռագրեր, գորգեր, ոսկերչության, խեցեգործության նմուշներ, սրբապատկերներ, նոր ժամանակների նկարներ, քանդակներ գտնվում են աշխարհի, նաև Հայաստանի թանգարաններում և մասնավոր անհատների մոտ, հարյուրավոր խաչքարեր սփռված են Հայաստանի և շրջակա երկրների տարածքում: Դրանից բացի հայկական սփյուռքում ապրած բազմաթիվ արվեստագետներ լրիվ մոռացված են: Նրանց ժառանգությունը կամ գտնվում է հարազատների հավաքածուներում կամ սփռված է զանազան թանգարաններում և հայտնի չի որտեղ: Այդ ամբողջ գեղարվեստական ժառանգությունը կարոտ է ուսումնասիրման: Հայ արվեստի բազմաթիվ գործիչներ և երկեր առ այսօր սպասում են իրենց ուսումնասիրողներին:

Жизнь художника Масиса Армена Бахадоряна и его натюрморты

Левон Чутасзян

Кафедра истории и теории искусства ЕГУ, исторический факультет, доктор искусствоведения, профессор, член академии Амброзиана в Милане (Италия), член-корреспондент академии Монпелье (Франция)

Ключевые слова: Масис Армен Бахадорян, изгнание, Геноцид, Колледж Мурад Рафаэлян, Чикаго, Арнольд Тартл, Паула Бахадор, натюрморт.

Масис Армен Бахадорян или Армен Бахадур является одним из тех художников, которые волею обстоятельств остались в тени и оказались забытыми. Он совершенно неизвестен в армянской Диаспоре и тем более в Армении. Он армянин, который зарабатывал себе на жизнь стоматологией, но никогда не расставался с кистью и палитрой и создал множество картин, выполненных с профессиональным мастерством и утонченным вкусом. Можно сказать, что медицина была для него средством существования, а живопись была духовной пищей. К сожалению, сохранились всего несколько художественных статей, посвященных ему и находящиеся в нашем распоряжении, либо было написано очень мало, либо они просто не сохранились. В основном в воспоминаниях родственников и друзей семьи есть информация о Масисе Армене Бахадоряне. Дошедшие до нас его картины свидетельствуют о его достижениях в области живописи.

* * *

Ներածություն: Ստվերում մնացած այսպիսի մի արվեստագետ է նկարիչ Մասիս Արմեն Բահադորյանը կամ Արմեն Բահադուրը: Սփյուռքում և առավել ևս Հայաստանում նա բոլորովին անձանոթ դեմք է: Նա մի հայ մարդ է, որը իր կյանքի ապրուստը վաստակել է ատամնաբուժությամբ, բայց երբեք ձեռքից վայր չի դրել վրձինը և ներկապնակը ու մասնագիտական հմտությամբ, նուրբ ճաշակով կատարված բազմաթիվ գեղանկարներ հեղինակել: Կարելի է ասել, որ նրա օրապահիկը եղել է բժշկությունը, իսկ հոգեպահիկը

Նկարիչ Մասիս Արմեն Բախադորյանի կյանքն ու իր նախնադրությունները

գեղանկարչությունը: Դժբախտաբար նրան նվիրված և մեր ձեռքի տակ եղած արվեստագիտական հոդվածները մեկ-երկուսն են և կամ շատ քիչ են գրվել կամ պարզապես դրանք չեն պահպանվել: Գլխավորապես հարազատների և ընտանիքի բարեկամների հուշագրություններն են տեղեկություններ պարունակում Մասիս Արմեն Բախադորյանի մասին, իսկ մեզ հասած նրա գեղանկարները վկայում են գեղանկարչության ասպարեզում նրա ձեռքբերումների մասին:

Մասիս Արմեն Բախադորյանը ծնվել է Արմենակ (1876-1915թթ.) և Հռիփսիմե (1892-1998թթ.) Բախադորյանների ընտանիքում Սունգուրլու կոչվող վայրում 1910թ. մարտի 18-ին: Նա ունեցել է նաև երկու քույր՝ Սիրվարդը (1907-1994թթ.) և Աշխենը (1914-1917թթ.), որը մահացել է մանուկ հասակում: Մասիսի մոր՝ Հռիփսիմեի մայրը՝ Վարդուհի Մարյանը (1873-1964թթ.) ծագումով Թուրքիայի Կեսարիայի քաղաքից ոչ հեռու գտնվող Թալաս գյուղաքաղաքից էր, որն ինչպես հայտնի է աշխարհահռչակ նավթային մագնատ Գալուստ Կյուլպենկյանի ծննդավայրն էր: Վարդուհին ամուսնացած է եղել Բենժամեն Խանյանի (1864-1939թթ.) հետ [Մասիս Արմեն Բախադորյանի ընտանեկան տոհմաճառը(անտիպ)]: Վերջինս որք է եղել և քանի որ Գալուստ Կյուլպենկյանի մորաքույրը երեխա չի ունեցել, ուստի որդեգրել է այդ երեխային և մեծացրել նրան: Բենժամենը դպրոց է գնացել Գալուստի և նրա եղբոր հետ ու հետո Գալուստի մորաքույրը նրան ուղարկել Կ.Պոլիս Ռոբերթ Քոլեջում սովորելու: Ուսումն ավարտելուց հետո նա վերադարձել է Թալաս, ամուսնացել և ապա նրան ուղարկել են Իրանի Մեշեդ քաղաքը գորգերի իրենց առևտրով զբաղվելու համար [Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի հուշերը(անտիպ)]: Նրա կինը Վարդուհին և չորս երեխաները մնացել են Թուրքիայում և ցեղասպանության ժամանակ ապահով վիճակում էին:

Արմենակ Բախադորյանը կտորեղենի առևտրով էր զբաղվում և ապագա նկարչի ընտանիքը երջանիկ ապրում էր վաճառատան վերնի բնակարանում: Մասիսը հինգ տարեկան է եղել, երբ սկսվել է հայերի տեղահանությունը: Նրա հուշերի համաձայն, թուրք զինվորները ներխուժել են նրանց տուն և տարել հորը ու վախեցած երեխան թաքնվել է հոր աթոռից կախված վերարկուի հետևում, որ զինվորները իրեն չտեսնեն [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Թուրք զինվորները զգուշացրել են ընտանիքի անդամներին, որ մեկ շաբաթվա ուտելիք վերցնեն և պատրաստ լինեն տունը թողնելու, մեկնելու այլ, ժամանակավոր կացարան՝ հետո այնտեղից մեկ այլ վայր տեղափոխվելու համար, քանի որ այդտեղ պատերազմական տարածք է: Ճիշտ այն վայրկյանին, երբ Հռիփսիմեն երեխաների և կեսուրի հետ դուրս է եկել տնից, անմիջապես նրանց տուն են բերել տեղավորել մի հարևան թուրք ընտանիք:

Տարագրության ժամանակ Հռիփսիմեն եղել է 23 տարեկան: Նա տնից հեռանալով, միամտաբար կարծում էր, որ դեռ պիտի այդտեղ վերադառնան: Հռիփսիմեին զավակների հետ քայլեցնում, տանում են մի գյուղաքաղաք եւ տեղավորում ախոռի մեջ [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Շուտով նրանց ուտելիքը վերջանում է և խեղճ երտասարդ կինը հուսահատության մեջ է ընկնում [Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի հուշերը(անտիպ)]: Այդ անելանելի վիճակի մեջ անսպասելիորեն գալիս է փրկությունը: Մի թրքուհի է մտնում այդ ախոռը, նայում աչ ու ձախ եւ ձեռքով մոտ կանչում նրան ու սկսում հարց ու փորձ անել, թե որտեղից ես, նման չես շուրջդ եղած գյուղացիներին: Երբ Հռիփսիմեն նրան ասում է, որ ինքը Կ.Պոլսից է, թրքուհին պատվիրում է նրան վերցնել

երեխաներին և հետևել իրեն, նաև հանձնարարում է կեսուրին թողնել այդտեղ, որ երբ թուրքերը գան փնտրելու նրանց, ասի, որ գնացել են հաց առնելու և շուտով կվերադառնան [Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի հուշերը(անտիպ)]:

Հռիփսիմեն ճարահատ երեխաների հետ նստում է թրքուհու կառքը և գնում նրա տուն: Պարզվում է, որ թրքուհին ու իր ամուսինը եկել են Կ.Պոլսից ամուսնու այդտեղ պաշտոն ստանալու կապակցությամբ և մի փոքրիկ, շատ գեղեցիկ աղջիկ ունեն, որը տառապում է էպիլեպսիայով (ընկնավոր է) և այդ հիվանդության նոպաները հաճախ կրկնվում են: Թրքուհին կտրել է տալիս Հռիփսիմեի և նրա երեխաների մազերը և նա ու իր ամուսինը ամենայն հարգանքով, սկսում են վերաբերվել նրանց հյուրերի նման, անգամ առանց նրանց սեղան չնստելով: Անշուշտ, սեփական հարկի տակ առնելով հայկական ընտանիքը, նրանք իրենց վտանգի էին ենթարկում: Թերևս փրկելով Հռիփսիմեին և նրա երեխաներին, թրքուհին կարծում է, որ աստված ողորմած կլինի իր դստեր նկատմամբ և վերջինս կազատվի իր հիվանդությունից [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Կարճ ժամանակ անց, աղջիկը կապվում է Հռիփսիմեին, շատ սիրում նրան, կարծելով, թե իր մորաքույրն է:

Երբ հրաման է գալիս ախոռում հավաքվածներին ճանապարհ դնելու, թրքուհին Հռիփսիմեին և երեխաներին սեփական կառքով ուղարկում է Կ.Պոլիս, պատվիրելով, որ ճանապարհին շշուկով հայերեն խոսեն՝ իրենց ազգությունը չբացահայտելու համար [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]:

Գրեթե միաժամանակ, երբ հերթը գալիս է Թալասի հայերին աքսորելու, թուրքերը, քանի որ շատ հարգում ու սիրում էին Գալուստ Կյուլպենկյանի մորաքրոջը, գալիս են տեղի վալիի(կառավարչի) մոտ և դիմում նրան, ասելով, որ չեն թողնի այդ տիկնոջը տարագրել: Մտահոգվելով, որ իր գլխին կարող է փորձանք գալ, կառավարիչը մի պաշտոնական կնքված գրություն, հավանաբար անցաթուղթ է տալիս մորաքրոջը, որպեսզի նա մեկնի Կ.Պոլիս: Վերջինս այդպես էլ վարվում է: Կառք է վարձում և մեկնում այնտեղ, ուր Սկյուտար թաղամասում Կյուլպենկյանները երկու հարկանի քարաշեն տուն ունեին [Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի հուշերը(անտիպ)] : Հաստատվելով այդտեղ, մորաքույրը իր մոտ է բերում Հռիփսիմեին և երեխաներին: Բարեբախտաբար շենքի գետնահարկում այլուր և այլ մթերքներ են ամբարտուած լինում և ընտանիքը քաղցած չի մնում այն դեպքում, երբ պատերազմի հետևանքով շուրջ բոլորը բնակչությունը սոված էր: Այստեղ 1917թ. մահանում է Մասիսի քույրը՝ Աշխենը: Պատերազմի զինադադարից հազիվ շունչ քաշած եւ եղեռնից մազապուրծ ազատված և գավառներից Կ.Պոլիս հասած հայ գաղթականները ու մայրաքաղաքի հայությունը նոր վտանգի առաջ են հայտնվում: Մուստաֆա Քեմալի զորքերի կողմից Իզմիրի գրավման, հրդեհման և բնակչության կոտորածի լուրն առնելով և իմանալով, որ նույն աղետը սպառնում է նաև մայրաքաղաքին, հայությունը վախի է մատնվում և զանգվածայնորեն սկսում լքել իր բնակավայրը:

Մասիսի մորաքրոջ ամուսինը մեքենա է վարձում և իր ընտանիքը ու Հռիփսիմեին գավակների հետ ուղարկում նրանց պապի՝ Բենժամենի մոտ, որը այդ ժամանակ Մեշեղ քաղաքում, որպես Կյուլպենկյանների առևտրական տան ներկայացուցիչ, գորգեր գնելով և Լոնդոն արտահանելով էր զբաղված և Մեշեղի հայությանը ղեկավարներից էր: Բենժամենը լսելով, որ իր հարազատները գալիս են, Մեշեղի ողջ հայությանը ճաշի է հրավիրում և կառքերով գնում են դիմավորելու եկողներին [Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի

Նկարիչ Մասիս Արմեն Բախադորյանի կյանքն ու իր նախնական փորձերը

հուշերը(անտիպ)]: Այսպիսով 1922թ. Մասիսը հայտնվում է Մեշեղում և սկսում հաճախել տեղի ամերիկյան դպրոցը [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Այստեղ նրա պատանեկությունը արագ է անցնում: Նա սովորում է լեզուներ, երաժշտություն և, դասերից ազատ ժամանակ, նկարում տան կողքով հոսող գետի ջրերով ողողվող տափակ քարերի վրա: Քանի որ նկարչական պիտույքներ ձեռքբերելը դժվար էր, ուստի այդ քարերը նրա համար, իր իսկ խոսքերով ասած, “գորշ կտավներ” էին, իսկ վրձիններին փոխարինում էին ածուխի կտորները [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Հարազատների վկայությամբ, Մասիսը միշտ սիրում էր երաժշտությունն ու արվեստը: Մեշեղում եղած ժամանակ նա միշտ մագլցում էր ծառը և ժամերով նվագում իր ֆլեյտան [Helen Petrossian Assatourian (Sirvart’s daughter) memories (manuscript)]:

Մասիսի կյանքում բախտորոշ դեր է կատարում քեռին՝ Բարսեղ Խանյանը (1894-1963) [Մասիս Արմեն Բախադորյանի ընտանեկան տոհմաձառը(անտիպ)]: Տեղահանությունից առաջ նա թողնում է Բեյրութի քոլեջի բժշկության դասերը և մեկնում Շիրազ՝ մանկության իր վաղեմի դասընկեր Խորեն Հյուսիսյանի մոտ: Նախքան Միացյալ Նահանգներ հասնելը, նա անցնում է Մարսել, ապա Փարիզ, ուր մնում է իր մեծմոր՝ Վարդուհի Խանյանի նույնպես արքայից խուսափած և Ֆրանսիա ապաստանած քրոջ տանը: Շիրազում կրթություն ստանալուց հետո Բարսեղը վերադառնում է ծնողների մոտ Մեշեղ, ամուսնանում և մնում այդտեղ: Եվրոպան և Ամերիկան, այսինքն աշխարհի տեսած Բարսեղը, ամենայն հավանականությամբ անվերապահ հեղինակություն վայելելով հարազատների շրջանում, կանխորոշում է իր զարմիկի՝ Մասիսի կյանքի ուղին: Նա գտնում է, որ Մասիսի համար լավագույնը այն կլինի, որ նա մեկնի Վենետիկ և ուսում ստանա հայկական Մխիթարյան կաթոլիկ միաբանության Մուրադ Ռափայելյան վարժարանում [Helen Petrossian Assatourian (Sirvart’s daughter) memories (manuscript)]:

Ա. Մասիս Արմեն Բախադորյանի ուսումնառության շրջանը Իտալիայում և կյանքը Ֆրանսիայում

Այդպիսով Մասիսին, երբ նա բոլորում է տասնվեց տարեկանը, այսինքն՝ 1926թ., սովորելու են ուղարկում Վենետիկ՝ Մխիթարյանների մոտ: Բաժանվելով մորից և մյուս հարազատներից, պատանին ճանապարհ է ընկնում դեպի անծանոթ հեռուներ, առանց պատկերացնելու, որ մինչև քառասուն տարեկան դառնալը նրանց չի տեսնելու: Այդ հանգամանքը իր ազդեցությունն է թողնում նրա բնավորության կազմավորման վրա և մանավանդ տրամադրությունների ենթակայության հակվածության զարգացման առումով: Վենետիկի հին պալատներից մեկում գտնվող Մուրադ Ռափայելյան վարժարանը, որը զարդարված է հռչակավոր գեղանկարիչ Տյեպոլոյի և նրա աշակերտների 18-րդ դարում ստեղծած որմնանկարներով, կախարդիչ ազդեցություն է թողնում արվեստասեր պատանու վրա [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Նման հրաշակերտներով շրջապատված երիտասարդը ավելի է ներշնչվում շարունակելու իր ինքնակրթությունը արվեստի ասպարեզում: Ճարտարապետական գծագրության դասերին նա սովորում է հեռանկար և համաչափություններ, իսկ ազատ ժամանակ նկարում յուղաներկով: Իտալիայում անցկացրած տարիներին նա հնարավորություն է ստանում ծանոթանալու և ուսումնասիրելու գեղանկարչության ու արձանագործության հրաշակերտները [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Ֆլորենցիայի Ուֆֆիցի պատկերասրահ և Հոմի անհամար թանգարանները կատարած այցելությունները ավելի են սրում մնայուն գեղագիտական արժեք

ներկայացնող գեղանկարներ ստեղծելու նրա փափագը [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Նա հատկապես հմայվում է Հռոմի Սան Պյետրո ին Կոելի եկեղեցում գտնվող Վերածննդի հանճարեղ քանդակագործ և նկարիչ Միքելանջելոյի Մովսեսի արձանով և նույն վարպետի Սիբստինյան մատուռի ձեղնանկարում “Մարդու ստեղծումը” պատկերով և դրանցից նոր ուժ առնում իր նպատակին նվիրվելու համար [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Սակայն անբավարար նյութական միջոցները թույլ չեն տալիս պատանուն արվեստի դասեր առնելու, ուստի հինգ տարի Իտալիայում սովորելուց հետո նա որոշում է ժողովել ինչ որ հնարավոր է գտարյուն ստեղծագործ արվեստի մթնոլորտում:

Միսիթարյան հայրերի մոտ ուսումնառությունը վերջացնելուց և քսանմեկ տարին բոլորելուց անմիջապես հետո՝ 1931թ., Մասիսը մեկնում է Փարիզ և մեկ ու կես տարի մնում այնտեղ Վարդուհու քրոջ տանը [Massis Armen Bahador, Born March 18, 1910, At Rest June 2, 1999]: Այստեղ նա գտնում է այն մթնոլորտը, որը տենչում էր: Նա սկսում է նկարել առանց որևէ կանոնների, զգացմունքայնորեն և այնպես ինչպես կարող էր: Իր ողջ ժամանակը Մասիսը այդտեղ անցկացնում է թանգարաններում, մանավանդ Լուվրում, ուր հաճախում է ամեն շաբաթավերջին, կախարդված Ռաֆայելի, Լեոնարդո դա Վինչիի, Ժակ Լուի Դավիդի, Ֆրանս Զալսի ստեղծագործություններով: Նա ջրաներկով և ածուխով ընդօրինակում է այս վարպետների գործերը: Այդպիսով մոտենալով հանճարեղ արվեստագետներին, ապագա նկարիչը փորձում է ինչ-որ կերպ լրացնել ձևական կրթության պակասը: Այս վարպետների նկարներից կրած ազդեցությունը և ստացած ներշնչանքը հրահանգներ և ուղենիշներ չեն դառնում: Նա անբավարարվածության սուր զգացում է ապրում: Փարիզյան շրջանը հուսահատությամբ է լցնում նրա հոգին: Նա տեսնում է, թե ինչպիսի դժվարությամբ են իր արվեստագետ ընկերները դրամ վաստակում իրենց հիմնական կարիքների և ստեղծագործական ծախսերը ծածկելու համար և ինչ փոխզիջումների են գնում, մաշելով իրենց տաղանդը, նորաձևությանը հետևելով, վաճառելու համար այն ինչ տվյալ պահին նորաձև է: “Ես տեսել եմ, թե ինչպես հիանալի շատ նկարիչներ կորցնում են իրենց անարատությունը, սակարկելով արվեստի վաճառողների հետ”, - հիշում է հետագայում Մասիսը [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: “Բայց ես նրանց չեի արհամարհում, այլ միայն նրանց համար ափսոսում էի. Ես որոշեցի, որ երբեք թույլ չեմ տա, որ հասարակական ճաշակները թելադրեն իմ նկարների ոճը: Եթե ես չկարողանամ ապրեցնել ինձ իմ արվեստով, ապա ես կկարողանամ դա անել այլ միջոցներով եւ ազատորեն մեկնաբանել կտավի վրա այն, ինչ կընտրեմ”, - նշում է Մասիսը: Նկարչական անկախության ծարավը մղում է նրան մասնագիտական այլ զբաղմունք փնտրել և քսաներեք տարեկանում նա որոշում է մեկնել ԱՄՆ և հաստատվել այնտեղ: Այդպիսով առաջին անգամ նրա կյանքում գործնականությունը գերիշխում է արվեստի նկատմամբ [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]:

Բ. Մասիս Արմեն Բահադորյանի ուսումնառության և աշխատանքային գործունեության շրջանը ԱՄՆ-ում

Փարիզում նկարչությամբ ապրուստ վաստակելու հեռանկարներ չտեսնելով, իր քեռու՝ Բարսեղի խորհրդով [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985], նա մեկնում է քեռու ընկերոջ՝ Խորեն Հյուսիսյանի մոտ, որը այդ ժամանակ Շիքագոյում Արևելյան գորգի առևտրական ընկերության սեփականատերն էր: Իր Բարսեղ քեռու միջնորդությամբ Մասիսը յոթ տարի ապրում է Հյուսիսյանի ընտանիքում [Helen Petrossian Assatourian (Sirvart's

daughter) memories (manuscript)]: Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ Իրանից Շիրազ գոյն է տեղափոխվում Բարսեղը և անցնում աշխատանքի որպես բժիշկ և հարազատները միանում են: Մասիսը, քեռու խորհրդով [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985], ընդունվում է սովորելու և չորս տարի հետո՝ 1938թ. ավարտում Իլլինոյսի համալսարանի ատամնաբուժության բաժինը տանը [Massis Armen Bahador, Born March 18, 1910, At Rest June 2, 1999]: Դրանից հետո նա որոշ ժամանակ սովորում է Այովայի համալսարանի ատամնաբուժության բաժանմունքում: Կրթության ուսման վարձը նա հոգում է բժշկական և ատամնաբուժական հանդեսներ և գրքեր ձևավորելով, մասնավորապես նկարագրողով դոկտոր Իսահակ Շուրի (Isaak Schour) [Исаак Шур] գիտական հոդվածները: Նրա՝ դեռևս ինքնուսի նկարչությունը շարունակվում էր տանը, դասերից ազատ ժամանակ, բայց առաջընթաց չէր լինում [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: 1943թ. նա վերադառնում է Շիրազ և վերջնականորեն հաստատվում այնտեղ [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահաստուր, 1957]: 1944թ. ատամնաբուժական գործի անցնելուց հետո Մասիսի նյութական հնարավորությունները ավելանում են և աշխատանքի ավելացման հետ գալիս է նաև որոշ անկախությունը: Պատերազմից հետո նա ընդհանուր ատամնաբուժության գծով հաջողակ գործունեություն է ծավալում Շիրազում: Նոր գտնված ազատության հետ մեկտեղ Մասիսը հասկանում է, որ իր ձեռքբերած նկարչական գիտելիքներով ինքը հասել է յուրատեսակ փակուղու: Նկարիչ ընկերներից մեկը ծանոթացնում է նրան Շիրազում հայտնի նկարիչ և ուսուցիչ Առնոլդ Թարթլի հետ [Жизнь и смерть черепахи Арнольда, Арнольд и Черепаха художник vtg orig 16x20 картина маслом лодки на воде и каюте]: Վերջինիս աշխատանքները տեսնելով Մասիսը նկատում է, որ վարպետի գեղանկարներին հատուկ է Ռենուարի, բոլորովին յուրահատուկ ոճով արտահայտված, նրբագեղությունը, 20-րդ դարի մտածողությամբ կիրառված] 19-րդ դարի գեղանկարչությունը, յուղաներկ աշխատանքների մեջ բանաստեղծականության ներմուծումը [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահաստուր 1957]: Արվեստի անհուն սերը սրտում կրող երիտասարդ ատամնաբույժը հասկանում է. Թարթլը ճիշտ այն մարդն է, որին ինքը պիտի աշակերտի: Նա դիմում է նկարչին, հարցնելով, թե արդյոք նա կհամաձայնի՞ իրեն դասավանդել, հայտնելով ամենասկզբից տարրական գիտելիքներ սովորելու իր մտադրության մասին: Վարպետը համաձայնվում է և ընդամենը երկու դաս հետո հայտնում Մասիսին, որ նա օժտված է տաղանդով: “Ես քեզ կսովորեցնեմ, թե ինչպես գործածել տաղանդը, իսկ նկարելը կսովորես ինքդ”, - ասում է նրան Թարթլը [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահաստուր 1957]:

Մասիսն աշխատանքից ազատ ժամանակ լրջորեն սկսում է նկարչության դասեր առնել նկարիչ Առնոլդ Թարթլից [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահաստուր 1957, Helen Petrossian Assatourian Sirvart's daughter) memories (manuscript)]: Վերջինիս մոտ նա սովորում է հինգ տարի: Առաջին տարին նա յուրացնում է երանգային նրբերանգների անցումները: Մասիսը միայն միագույն պատկերներ է նկարում այդ շրջանում: Ու թեև նա ձգտում է օր առաջ տիրապետել յուղաներկային գաղտնիքներին, բայց ուսուցչի ցուցումները նրան ետ են պահում և նա իշխում է իր ձգտումների վրա: Ուսման երկրորդ տարին նա միագույն աշխատանքներին զուգահեռ սկսում է հմտանալ բազմագույն նկարչության մեջ: “Յուղաներկով աշխատելիս, վրձնահարվածներով փոխելով գույնը, սովորաբար չափազանց ծանր տեսք է ստանում նկարը, երբ արվեստագետը

ներկը դնում է չոր կտավին՝,- հետագայում հիշում է նկարիչը: Մասիսը նշում է, որ “Թափանցիկ ներկը միագույն գեղանկարի վրա փայլեցնելը թույլ է տալիս այն կիրառել փորձելու և սխալվելու ու նորից փորձելու միջոցով”: Ուսման այս փուլը ևս մեկ տարի է տևում: Թարթլի մոտ սովորելու երրորդ տարում նա վերջապես սկսում է գունավոր յուղաներկերով աշխատել: Այդ ժամանակ նա արդեն տիրապետում էր երանգային ելևէջներին և կարող էր իրոք կիրառել ներկապնակի բոլոր գույները [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]: Դրանով է բացատրվում ամենից ավելի գույնի չափազանց ուժգնությունը նրա սկզբնական շրջանի գեղանկարներում: Միայն ավելի ուշ, նա ինքնուրույնաբար զարգացնում է երանգների ուժգնության մատուցման զսպվածությունը: Չորրորդ տարվա առաջին դասին Թարթլը մոտենում է նրան և խոստովանում, որ այլևս ոչինչ չի կարող սովորեցնել նրան և արդեն Մասիսն ինքը պետք է զարգացնի իր ոճը և տեխնիկան: Այդուհանդերձ Մասիսը մնում է ուսուցչի արվեստանոցում ևս մեկ տարի վարպետի, գույնի և նկարի կառուցման, հրահանգները ավելի ամրացնելու համար: Նա լրջորեն ուսումնասիրում է առարկայի ներկայացման գործում լույսի տարբեր ազդեցությունները, մանավանդ գույնի փոփոխությունը: Նա նկատում է, թե ինչպես մերկ բնորդի մաշկը արևի լույսի տակ ոչ միայն պայծառ երանգավորվում է, այլև պայծառ գույներ է ձեռք բերում: Աստիճանաբար Մասիսը հրապուրվում է տպավորապաշտների արվեստով և սկսում հետևել այդ ուղղության սկզբունքներին:

50-ական թվականների սկզբին նրա մեծ մայրը՝ Վարդուհին և մայրը՝ Հռիփսիմեն Իրանից Շիրազո են տեղափոխվում և սկսում ապրել Բարսեղի տանը [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]:

Առնոլդ Թարթլից դասերին հաճախում է նաև Մասիսի ապագա կինը՝ Պաուլա Քոնիշթոփը: Նրանք ծանոթանում, մտերմանում են: 1953թ. Պաուլա Քոնիշթոփի տան բակում Ռիջենթ արվեստի լիգայի անդամները, այդ թվում և Մասիսը իրենց նկարներով ցուցահանդես են կազմակերպում, փակցնելով դրանք պատերին, ցանկապատերին, կախելով ծառերի ճյուղերից [Regent League to Display Art Works Today 1953]:

1954թ. Մասիսն և Պաուլան ամուսնանում են: Պաուլան դրանից հետո դադարում է նկարել, համարելով, որ տան մեջ մեկը պիտի լինի նկարիչ [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահատուր 1957]: Իր ուրախ, զվարթ, լավատես բնավորությամբ նա լրացնում էր Մասիսի նկարագիրը: Մասիսի համար նա հրաշալի կին էր: Նրանք 44 տարի ապրում են համատեղ խաղաղ կյանքով, բայց երեխաներ չեն ունենում: Պաուլան բնորդուհի է ծառայում Մասիսի բազմաթիվ նկարների համար [Massis Armen Bahador, Born March 18, 1910, At Rest June 2, 1999]:

Խորեն Հյուսիսյանի վկայությամբ, Մասիսը իսկական արվեստագետի խառնվածք ուներ և իր ազատ ժամերը նվիրում էր նկարչությանը, հատկապես դիմանկարների ստեղծմանը: Ըստ Հյուսիսյանի, Մասիսի ստեղծագործությունների վաճառքից գոյացած գումարները հավասարվում էին նրա ատամնաբուժական աշխատանքից ստացված եկամուտներին [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985]: Մասիսն այդ երկու բնագավառներում էլ աստիճանաբար քայլ առ քայլ հասունանում էր և համբավը շարունակաբար աճում, համապատասխանաբար նաև դրամական միջոցները [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985]: Մեծ մասամբ նա նկարում է դիմանկարներ և նատյուրմորտներ: 1953թ. Ռիջենթ լիգայի իր գեղանկարները Մասիսը սկսում է ստորագրել

Նկարիչ Մասիս Արմեն Բախադորյանի կյանքն ու իր նախընտրությունները

“Մ.Արմեն”։ Նա տարեկան սկսում է արտադրել 30-35 կտավներ, որոնք սկսում են վաճառվել բարձր գներով։ Նա իր նկարներն է սկսում ցուցադրել Շիքագոյի Ջոնսոն պատկերասրահում։ 1955թ. սեպտեմբերին Շիքագոյի Գալերիների ընկերակցության սրահում բացվում է նրա անհատական ցուցահանդեսը, որը բացառիկ հաջողություն է ունենում [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ.Մասիս Ա. Պահատուր 1957]։ Մասիսի նկարները երկու անգամ արժանանում են Ռիչենթ լիգայի մրցանակներին։ 1959թ. մարտին Շիքագոյի Ռեյ Քարուզոյի ռեստորանում բացվում է և մինչև ապրիլի վերջ տևում Մասիսի քառասուն պատկերներից բաղկացած անհատական ցուցահանդեսը [Dentist Drills on Art Technique 1959]։ Վերջիններից մի քանիսը մրցանակների էին արժանացել Շիքագոյի շրջանի արվեստի ցուցահանդեսներում։ Նույն տարին Իլլինոյս նահանգի տոնավաճառում արվեստի քննադատներից բաղկացած հանձնաժողովը 500 դոլարի առաջին մրցանակն է հատկացնում նրան “Երիտասարդ աղջիկը” նկարի համար, որը պատկերում էր Քարոլին Քորդեսին [Dentist Signs Pictures with “Brush Name”, Paintings Displayed in Restaurant. 1959]։ Այդ նույն օրերին անանուն հողվածագիրը “Շիքագո Սանդեյ Թրիբյուն” լրագրում նշում է, որ վերջին տասը տարում շուրջ 150 անհատներ և առնվազն մեկ թանգարան գնել են Մասիսի գեղանկարչական գործերը և գնողների մեծ մասը չեն իմացել, որ դրանց վրա “Մ.Արմեն” ստորագրած հեղինակը աստամնաբույժ դոկտոր Մ.Ա.Բախադորյան է։

Արվեստի քննադատ Ռ.Մեյդի կարծիքով, նրա նկարագրում հազվագյուտ կերպով միախառնված էին երկիր մոլորակի արևելյան և արևմտյան կիսագնդերի մշակույթները և նույնիսկ էլ ավելի հազվագյուտ հանդիսացող գիտության ու արվեստի տաղանդների հաշտեցումը [Richard Seid, Painted Women of a Scientific Man 1963]։ Նկարչի կյանքի և կենսագրության բերումով նրա էության մեջ կար և՛ արևելքը և՛ արևմուտքը։ Նրա նկարները, ըստ նույն արվեստի քննադատի, և՛ թեմայով և՛ ոճով արևմտյան էին, իսկ բնակարանը ձևավորված էր արևելքի զարդարվեստի ոգով։

Աստիճանաբար Մասիսը մեծ ճանաչում է ձեռք բերում 50-ական թվականներին և նրա արվեստը սկսում է հաճախ լուսաբանվել «Շիքագո Թրիբյուն» լրագրում։ Լոս Անջելեսի Արարատ-Էսքիջյան թանգարանի պատասխանատու Մարգարիթ Մանգասարյան-Գոշինին ուղղած Մասիսի փաստաբան Ջոնաթան Գրինի 2019թ. մայիսի 5-ի նամակից պարզ է դառնում, թե ինչու է 1950-ական թվականների վերջից նկարչի արվեստի մասին մամուլը սկսում լռել։ Ահա այդ նամակի մեջ տրված տեղեկությունը։

Ի պատասխան Մասիսի գեղարվեստական հաջողությունների, Շիքագոյի աստամնաբուժական ընկերության* էթիկայի հանձնաժողովի որոշ աստամնաբույժներ հայտարարում են, որ Մասիսի նկարների ցուցահանդեսները, օրենքին հակառակ, նրա գովազդներն են, քանի որ պարունակում են նրա անունն եւ աստամնաբուժական հասցեն, որտեղ նա նաև բնակվում էր։ Մասիսը սոսկալի վրդովվում է, նա չէր կարող համակերպվել այդ զրպարտության հետ և հասկանում էր, որ գործ ունի նախանձի և խտրականություն հետ, քանի որ նա չէր պատրաստվում գովազդել իր աստամնաբուժական գործը։ Իրականում «Շիքագո Թրիբյունի» և քաղաքի մյուս լրագրերի հողվածագիրներն էին հետաքրքրվել և գտել նրա հասցեն ու տեղադրել իրենց գրվածքներում։ Նա զգում էր, որ ինքն իրավունք ունի նկարելու և ցուցադրելու իր գործերը։ Ընկերության անդամները շարունակում են մնալ իրենց կարծիքին և դիտարկել հարցը ու նրան պաշտոնական նամակ են ուղարկում, որով հայտնում են, որ էթիկայի հանձնաժողովը վերստին քննել է իրավիճակը՝

որոշելով Մասիսին դուրս դնել այդ խմբից, որոշակի ժամանակ տալով բողոքարկման համար: Մասիսը դժվարանում էր հավատալ, որ այդ ամենը իրականություն է: Նա կապվում է Ամերիկայի ատամնաբուժական ընկերության հետ, բացատրում իրավիճակը և նրան իրավացի գտնելով հանդերձ, պատասխանում են, որ դա տեղական խնդիր է ու պետք է բողոքարկվի տեղական օրենքների համապատասխան: Դրանից հետո Մասիսը շատ հանգամանակից և խիստ նամակ է հղում Շիքագոյի ատամնաբուժական ընկերությանը, ըստ էության, նրանց մեղադրելով բացահայտ կեղծավորության և նախանձի ու խտրականության մեջ: Նա նույնիսկ հիշատակում է, թե ինչպես էր էթիկայի հանձնաժողովի առաջնորդներից մեկը իր անունով և ատամնաբուժական աշխատանոցով նշվում թերթերում, 1959թ. հուլիսին Եղիսաբեթ թագուհու Չիկագո կատարած այցի ընթացքում, նրան «Դրեյք» հյուրանոցում շտապ ատամնաբուժական օգնություն ցույց տալու համար հրավիրվելու կապակցությամբ:

Ըստ Ջոնաթան Գրինի, Մասիսը զգում էր, որ խումբն միշտ ունեցել այդ վերաբերմունքն իր նկատմամբ և որ դա լիովին անարդար է և, որ նա բացարձակ իրավունք ունի զբաղվելու սիրած գործով, նկարելու, ցուցադրելու, վաճառելու սեփական նկարները ու դա կապ չունի ատամնաբուժական աշխատանքի հետ:

Մասիսը բազմաշնորհ մարդ էր, ձեռքից շատ բան էր գալիս և անձամբ իր աշխատանքային գրասենյակները ձևափոխում, հարմարեցնում էր նաև ապրելու համար, մինչև որ հետագայում նա տեղափոխվում է իր շինած նոր մեծ տունը Իլինոյս նահանգի Դես Պլեյնես քաղաքում կնոջ՝ Պաուլայի և ծնողների հետ [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]:

Ըստ Ջոնաթան Գրինի, այդտեղ նա ստեղծում է անձնական արվեստանոցը ու նոր ատամնաբուժական գրասենյակ կառուցում տան առջև: Ըստ Պաուլայի, Մասիսը շարունակում էր վրդովվել և դավաճանված զգալ տեղի ունեցածի կապակցությամբ և այդ դեպքերից հետո շատ հեռու էր պահում իր նկարները օտար աչքերից: Նա շարունակում էր սահմանափակ մասնավոր վաճառքներ իրականացնել միայն իրեն ճանաչող երկրպագուների և հարազատների շրջանում: Հայ նկարչի նկատմամբ ինչ-որ խտրականություն կար, և նա հաճախ որոշակի ռիսկի էր դիմում հասարակության մեջ դասական մերկ կերպարանքներ ի ցույց դնելով, կեղծ պարկեշտություն դրսևորող, բայց այդ մերկությունը որպես այդպիսին չնշող, ատամնաբուժական մասնագիտական

Թոշակի անցնելուց հետո Մասիսը սկսում է զանազան արհեստներ սովորել: Նա հմտանում է վիտրաժների, այսինքն՝ ապակենկարների (stained glass, vitrail) և ատաղձագործության մեջ: Նա գեղեցիկ պատուհաններ է պատրաստում իր տան համար և դրսի դռան համար երկու ապակենկարներ, որոնք պատկերում են Ադամին ու Եվային դրախտային պարտեզում [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Նա իր ջերմ հյուրասիրությամբ, արտաքին մեղմ վարվեցողությամբ, ընկերական վերաբերմունքով գրավում է իրեն հանդիպող մարդկանց [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985]: Մասիսի տան պատերը զարդարված էին նրա, ինչպես նաև նրա ուսուցիչների գեղանկարներով, իսկ հատակին փռված էին հին և նոր արևելյան գորգեր: Պաուլան ձևավորողի նուրբ ճաշակով տանը ստեղծել էր լավ ծրագրված թանգարանի մթնոլորտ: Ամուսինները հոյակապ հյուրընկալներ էին և բարեկամները հաճախ ընթրիքի հրավիրվում նրանց տուն: Պաուլան խոհարարական հմտություններով և ճաշակով համեղ ուտեստներ էր պատրաստում հյուրերի համար [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985]: Մասիսը քչախոս, համեստ մարդ էր, լավ

Նկարիչ Մասիս Արմեն Բախադորյանի կյանքն ու իր նախադրմունքները

ունկնդիր, իր մտքերը միայն այն ժամանակ արտահայտող, երբ լավ տրամադրության մեջ էր լինում: Թեև սպորտով հետաքրքրվում էր, բայց մարզասեր չէր և ֆիզիկապես ուժեղ չէր: Աշխատանքից զատ նա իր ժամանցն անցկացնում էր դասական երաժշտություն լսելով: Մասիսը մեծ սեր ուներ դասական երաժշտության հանդեպ և ժամերով լսում ու չափ էր տալիս ասես ինքն էր ղեկավարում նվագախումբը: Պաուլան անգամ նրա համար նվագախմբի ղեկավարի փայտիկ է գնում [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Օպերա կամ սիմֆոնիկ կամ նշանավոր երգահանների համերգները լսելիս նրա հոգին թևածում էր ամպերում: Իբրև իսկական արվեստագետ նա ապրում էր հին ու նոր գլուխգործոցները վայելելով [Khoren Leon Hussisian, My Life, Remembrances and Memories, June, 1985]:

Բարսեղ Խանյանը և Մասիսը շատ մտերիմ էին նույնպես Շիրազոյում բնակվող նշանավոր օրթոպեդիկ վիրաբույժ Համբար Քելեքյանի [Hampar Kelikian. 1983, Hampar Kelikian, Dr. Hampar Kelikian] հետ, որը հատկապես հայտնի էր դարձել երկրորդ համաշխարհային պատերազմում վիրավորված սենատոր Բոբ Դոլի (Bob Dole) ձեռքը բուժելու կապակցությամբ: Մասիսը իր կյանքի վերջին շրջանում նախքան Հ. Քելեքյանի վախճանվելը հաճախ էր գնում նրա տունը, բժշկի վիրաբուժական վերջին գրքի համար մարմնակազմական (անատոմիական) պատկերներ պատրաստելու առիթով: Դոկտոր Հ. Քելեքյանի մահը շատ է տխրեցնում և թևաթափ անում նրան [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: Առհասարակ Մասիսը, հակառակ իր զբաղվածության, հեռու չէր մնում գաղութահայ կյանքից, հետաքրքրվում էր հայկական կյանքով և միշտ մասնակցում էր ազգային ձեռնարկներին:

Դեռևս երբ Մասիսը նոր էր սկսել իր աշխատանքային գործունեությունը, նրա մայրը, մեծ մայրը և մորաքույրը ընտանիքով ապրում էին Թեհրանում՝ Սիրվարդի տանը՝ նրա ընտանիքի հետ: Սիրվարդի ամուսնու մահից հետո Մասիսը տարիներով օգնում է հարազատներին [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]:

1963թ. Բարսեղ Խանյանը վախճանվում է և մեկ տարի անց իր մահկանացուն է կնքում նաև Մասիսի մեծմայրը՝ Վարդուհին: Դրանից հետո Մասիսի մայրը՝ Հռիփսիմեն տեղափոխվում և սկսում է ապրել որդու տանը: Որոշ ժամանակ անց, Հռիփսիմեի թոռը՝ Հելեն Ասատուրյանը հրավիրում է նրան ապրելու Կալիֆորնիա և 1966թ. Մասիսի մայրը մեկնում է Լոս Անջելես նրա մոտ [Helen Petrossian Assatourian (Sirvart's daughter) memories (manuscript)]: 1998թ. Հռիփսիմեն վախճանվում է Գլենդելում: Մոր մահից հետո Մասիսը երկար չի ապրում: Նկարչի մասնագիտական զբաղվածությունը և արվեստին նվիրած զբաղումները չեն օգնում Մասիսին հաղթահարելու հարազատների կորստի ցավը:

Ջոնաթան Գրինի վերը նշված նամակից պարզվում է, որ ժամանակի ընթացքում տարիքն առնելով, Մասիսը սկսում է դանդաղ նկարել, հատկապես, երբ սկսում է աչքի հետ կապված խնդիրներ ունենալ: Նա նաև ընկճվածության զգացողություններ է սկսում ունենալ (գուցե աչքերի տկարության պատճառով): Նա միշտ պնդում էր, որ այն գործերը, որոնք նա պահում է տանը, որի համար նա շատ հպարտ էր, պետք է մնան որքան հնարավոր է միասին, , որքան նրա ժառանգությունը:

Մասիս Արմեն Բախադորյանը կնքում է իր մահկանացուն 1999 թ. հունիսի 2-ին Շիրազոյում: Մասիսի կինը՝ Պաուլա Բախադորը ամուսնու մահից անմիջապես հետո կտակի միջոցով

պատվիրում է, որ նրա նկարները հանձնվեն հայկական մի հաստատության և ուսումնասիրվեն ամուսնու ստեղծագործությունները ու միջոցներ ստեղծվեն սփյուռքահայ երիտասարդ նկարիչների կրթությանը աջակցելու համար: Պաուլան երկար տարիներ ապրեց ամուսնու մահից հետո և վախճանվեց 2016 թ. փետրվարի 11-ին: Տասնամյակներ շարունակ նա եղավ Մասիսի հավատարիմ բնորդուհին և որպես արդյունք ծնվեցին նրան ներկայացնող բազմաթիվ գեղեցիկ կտավներ: Նա իր կյանքի քառասուն տարիները նվիրեց ամուսնուն և, բացի այդ, աշխատեց որպես տարրական դպրոցի ուսուցչուհի [Bahador Paula, Death notices. 2016]: Մասիսի նկարները որոշ չափով հայտնի դարձան ամերիկացի գեղարվեստասերների միջավայրում և բոլորովին անծանոթ չմնացին նաև սփյուռքահայության շրջանում [Ամերիկահայ նկարիչ, Տոքթ. Մասիս Ա. Պահատուր 1957]: Կարո Գևորգյանի “Ամենուն տարեգրքում” 1957թ. լույս տեսած հոդվածը սփյուռքահայությանը ծանոթացնում է նրա կենսագրությանը և արվեստին: Դժբախտաբար արվեստագետի անունը անհայտ է մնում հայաստանաբնակ արվեստասեր հասարակությանը:

Գ. Մասիս Արմեն Բահադրյանի նատյուրմորտները

Մասիսի վաճառված պատկերների լուսանկարները ցույց են տալիս, որ նրա ստեղծած գեղարվեստական աշխատանքների մեջ զգալի թիվ են կազմել նատյուրմորտները, որոնցից ներկայումս ընդամենը չորսն են պահպանվել: Դրանք կազմված են զանազան առարկաներից, ծաղիկներից ու պտուղներից: Համաշխարհային արվեստում տարածված այս տեսակի գործերի անհամար բազմության մեջ թվում է, թե հնարավոր չէ այլևս նոր խոսք ասել: Այդուհանդերձ, հայ նկարչի կտավների դիտարկումը թույլ է տալիս տեսնել, որ նրա նատյուրմորտները նույնպես իրենց գեղարվեստական արժանիքներով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում: Վերջիններիս շարքում համեմատաբար շատ են եղել տեսակ-տեսակ ծաղիկներով պատկերները: Մասիսն իր սիրած գործերը գետեղել է գեղեցիկ և հատուկ զարդերով շրջանակների մեջ: Դրանք իրենց նուրբ գույնով գեղեցիկ կերպով ներդաշնակվել են ստեղծագործությունների ընդհանուր երանգաշարի հետ: Այդ աշխատանքների մեջ շատ են եղել այնպիսիները, որոնք ցուցադրում են զարնան նոր ծաղկած ծառերից կտրված, ծաղկամանների մեջ դրված ճյուղեր:

Վաճառված նկարների լուսանկարներից դատելով, կարելի է համոզվել, որ Մասիսի նատյուրմորտների մեծ մասը ծաղիկներով ու ջրամաններով պատկերներ են: Պահպանված նատյուրմորտների մեջ իր պարզ շրջանակով առանձնանում է օխրայով գունավորված սափորով պատկերը, որտեղ հայտնվում են կարմիր վարդեր և այլ դեղնա-նարնջագույն ծաղիկներ (նկ. 1): Դրանք ակտիվ գույներով, կանաչ տերևներով ընդգծվում են սպիտակ, դեղնավուն վրձնահարվածներով կատարված սփռոցի ու բաց մանուշակագույն, շագանակագույն երանգներով խորքի վրա: Նկարն աչքի է ընկնում գծանկարի մտածվածությամբ: Ստեղծագործության վերնի աջ մասում երևում է պատին ամրացված նկարի մի հատվածը: Մասիսն այս մանրամասնը հաճախ է ընդգրկում իր զանազան պատկերներում, նույնիսկ բնորդուհիներին ներկայացնելիս: Այդպիսով նա որոշ հավասարակշռություն է մտցնում նկարի մեջ: Ըստ երևույթին, այդ առանձնահատկությունը հայտնվում է այդտեղ իր ուսուցչի՝ Թարթի դասերի ազդեցությամբ [Жизнь и смерть черепахи Арнольда]: Սափորի կոր կողերը հակադրված են ծաղիկների, առաջին հայացքից չերևացող, անկյունագծային ուղղվածությանը և պատի նկարի շրջանակի ուղղահայաց ու հորիզոնական կողերի առանցքներին: Նկարչին այստեղ, հավանորեն, հատկապես հետաքրքրել է հորինվածքի թաքուն երկրաչափականության ստեղծումը: Մասիսը այստեղ, ինչպես և

դիմանկարների մեջ, մեծ ուշադրություն է հատկացնում լույս ու ստվերի հաղորդմանը: Լույսն այստեղ ընկնում է ձախից և սափորի վրայի լույսի ցուլքը հաղորդված է սպիտակ գույնով, իսկ մուգ հատվածը շագանակագույնով: Սփռոցի վրա սափորի թողած ստվերը մուգ մանուշակագույնով է ներկայացված և էական դեր չի խաղում ընդհանուր գունաշարում:

Մասիսի նատյուրմորտներում շատ հազվադեպ է հայտնվում կանաչ և փիրուզագույնի երանգներով հարստացված խորքը: Փիրուզագույնի երանգներով սփռոցի և կապույտ խորքի վրա ներկայացված գեղեցիկ նատյուրմորտներից մեկում տեսնում ենք պղնձե, բայց ոսկեգույն երևացող, լայն ջրամանի մեջ դրված սպիտակ, դեղին քրիզանթեմներ, յասամաններ, վարդագույն մեխակներ, երիցուկներ, կարմիր, կապույտ, բաց նարջագույն ծաղիկներ:(Նկ.2) Վերջիններս հիանալի կերպով ընդգծվում են կանաչավուն, մանուշակագույն երանգներով խորքի վրա: Ծաղիկներն իրենց զանազան կողմեր ուղղված ճյուղերով ակտիվ, անհանգիստ, անգամ սպառնալից ռիթմ են բերում նկարի մեջ: Այդ ռիթմին հեղինակը հակադրում է ամանի գեղեցիկ կորերը, որոնք ընդհակառակը մեղմություն են հաղորդում պատկերին:

Խորքի և կանաչ սփռոցի վրա հայտնվող մանուշակագույն վրձնահարվածները հարստացնում են ստեղծագործության գունաշարը: Նույն նպատակին են ծառայում ջրամանի վրա երևացող շագանակագույն երանգները: Այդ գույնով Մասիսը հաղորդում է նաև ամանի ստվերային հատվածը և սփռոցի վրայի ստվերը: Նկարի գեղեցիկ շրջանակը իր ոսկեգույնով ու կանաչ, նաև ստվերային շագանակագույն թվացող ակոսներով նրբորեն ներդաշնակվում է կանաչ և փիրուզագույն ընդհանուր գունաշարի հետ ու նպաստում ստեղծագործության գեղեցկության ավելի լավ ընկալմանը:

Ջրամանի և ծաղիկների չափերն ասես միտումնավոր հակադրված են իրար: Հավանաբար, հեղինակի նպատակն է եղել բացահայտել ծաղիկների ողջ գեղեցկությունը, ծաղկեփունջը ծավալելով ողջ նկարի մեջ: Այդ նպատակով է նա շեշտել նաև ծաղիկների ճյուղերի անկյունագծային տարբեր ուղղությունները, ասես ճառագայթաձև տարածվող առանցքները: Այդ անկյունագծային առանցքներին հակադրված են ամանի կոր հատակը ու սեղանի հորիզոնական գծի ռիթմը: Նկարիչը հատուկ է ուշադիր գտնվել այդ ակտիվ ռիթմի և ջրամանի կոր ձևի հարաբերության նկատմամբ: Նաև այդպիսով է նա ամբողջացրել պատկերի թաքուն երկրաչափականությունը: Ծաղիկների վերնից տարածվող լուսավորվածության շնորհիվ ստեղծագործությունը խորհրդավոր շունչ է ստանում, ասես հիշեցնելով ամերիկահայ նշանավոր նկարիչ Հովսեփ Փուշմանի (Փուշմանյանի) նատյուրմորտները [Չուգասզյան 1986, Չուգասզյան, Նկարչության բանաստեղծը 1986, Չուգասզյան 1987]: Ամենայն հավանականությամբ, Մասիսը ծանոթ է եղել վերջինիս արվեստին և գուցե, մինչև անգամ, անձնապես այդ նկարչին, քանի որ վերջինիս եղբայրները ապրում էին Շիքագոյում: Անկասկած, սա Մասիսի լավագույն աշխատանքներից է:

Մասիսը հեղինակել է նաև մրգերով ու տեսակ-տեսակ շշերով, սափորներով բազմաթիվ նատյուրմորտներ, որոնց մեծ մասը վաճառվել է: Վերևում քննարկված նկարների պարագայում արդեն առիթն ունեցանք համոզվելու, որ նկարչի նատյուրմորտների մեջ երբեմն մասամբ կամ ամբողջովին որպես բաղադրիչ երևան է գալիս պատին ամրացված նկարը: Չվաճառված այդպիսի գործերից մեկը պահպանվել է և ստեղծված է մեծ, կապտավուն մանուշակագույն թեյնիկի,

պառնկեցրած հյուսված պատյանով սպիտակ ապակե սափորի և վերջինիս շուրջը փռված կարմիր խնձորի, դեղձերի, բաց կանաչ տանձի ու կանաչ բիբարի համադրությամբ: (Նկ.3)

Այստեղ առարկաները դրված են սեղանին փռված դեղին սփռոցի վրա, որի ստվերները կանաչավուն երանգ են ստանում նկարի խորքում: Սփռոցի ստվերները յուրահատուկ մթնոլորտ են ստեղծում պատկերի տարբեր առարկաների ընկալման համար: Սեղանը տեղադրված է պատի առաջ, որի վրա կիսով չափ երևում է վերջինիս ամրացված նկարը: Պատի մուգ մանուշակագույն և տեղ-տեղ գորշ կապտավուն ներկվածությունը նպաստում է պատկերի մնացած բաղադրիչների ընդգծված արտահայտմանը: Վերնից և աջից ուղղված ուժեղ լուսավորության շնորհիվ սեղանին դրված առարկաները ցայտուն կերպով առանձնանում են խուլ երանգներ ունեցող պատի խորքի վրա:

Բոլոր ցուցադրված առարկաները աջ մասից անջատվում են մասամբ երևացող, շագանակագույն վարագույրով, որը տեղ-տեղ հագեցված է կարմիր բռնկումներով, մանուշակագույն ու կապույտ վրձնահարվածներով: Մուգ վարագույրը որոշ խորհրդավորություն է հաղորդում նկարին: Նկարն հետաքրքիր է իր թաքուն երկրաչափականությամբ քանի որ այստեղ մեծ կարևորություն է տրված կորերի կիրառությանը, որն ի հայտ է գալիս թեյնիկի իրանի կորերի և ճկված կանթի, սափորի ուռուցիկ հատվածի, մրգերի ձևերի, վարագույրի ալիքաձև եզրի մեջ, որոնց հակադրվում են կանգնեցված թեյնիկի և պատի նկարի ուղղահայաց, նաև վերջինիս հորիզոնական առանցքը, ինչպես նաև պառնկեցրած սափորի ու սեղանի սփռոցի եզրի անկյունագծային առանցքները: Թեյնիկն ու սափորը իրենց կոր փորերով ու պտուղների կորերով յուրահատուկ գեղեցիկ հավասարակշռություն են բերում ստեղծագործության մեջ: Նուրբ երանգների այս մթնոլորտում նկարիչը աչքաթող չի անում լույս ու ստվերի խնդիրները. սպիտակ վրձնահարվածներով նա հմտորեն նշում է թեյնիկի ու սափորի վրայի լույսի ցուլքերը:

Բոլոր ներկայացված առարկաները տարբեր դասավորությամբ և այլ բաղադրիչների հավելումով հայտնի են նաև Մասիսի վաճառված նկարներից: Հավանաբար չգոհանալով այս կամ այն նատյուրմորտի ներքին կառուցվածքով նկարիչը, նույն բաղադրիչների դասավորությունը փոքր-ինչ փոխելով, պատկերի նորանոր տարբերակներ է ստեղծել, փորձելով առավելագույնս իրականացնել իր գաղափարները, ինչպես նաև բացահայտել զանազան իրերի մեջ թաքնված գեղագիտական հնարավորությունները: Ճկված կանթով երկար սլացիկ թեյնիկի կողքին պառնկեցված ապակե սափորի հարևանությամբ, սեղանի վրա դրված կարմիր և դեղին խնձորները, իրենց ստվերներով, յուրահատուկ հորինվածք են կազմում, հիշեցնելով ֆրանսիացի նշանավոր նկարիչ, իմպրեսիոնիստ Պոլ Սեզանի նմանօրինակ աշխատանքները: Նատյուրմորտն ամփոփված է իրեն գունային տեսանկյունից ներդաշնակող, ոսկեգոծ զարդերով ու մոխրագույն ակոսով շրջանակի մեջ: Ստեղծագործության նկարագրին միանգամայն պատշաճում է շրջանակի ոսկեգույն ու շագանակագույն բնույթը:


Պահպանված վերջին նատյուրմորտը ավելի համառոտ բնույթ ունի և ավելի քիչ բաղադրիչներից է կազմված: (Նկ.4) Մինչև անգամ առաջին հայացքից թվում է, թե աշխատանքն անավարտ է, քանի որ նկարի ընդհանուր գունաշարում գերիշխում են սպիտակ թողնված հատվածները: Ճկված կանթով մուգ կապույտ ջրամանի առաջ՝ սպիտակ սփռոցի վրա դրված երկու կարմիր խնձորները, կանաչ տանձը, նարինջը ընդգծվում են ընդհանուր սպիտակ միջավայրում: Ջրամանի շուրջը, ասես հետևի պատի վրա, դեղին, կանաչ, վարդագույն

Նկարիչ Մասիս Արմեն Բախադորյանի կյանքն ու իր նատյուրմորտները

վրձնահարվածները չեն զբաղեցնում պատկերի ողջ սպիտակ խորքը: Այս երևույթը հիշեցնում է Մասիսի պատկերած որոշ դիմանկարներ, օրինակ կարմրագգեստ չինացի կնոջ նկարները: Խնդրո առարկա նատյուրմորտի մեջ նկարիչը լուսավորությունն իրականացրել է ձախից և վերնից, լույսի ցուրթերը բաշխելով բոլոր բաղադրիչ մասերի վրա: Դրա շնորհիվ նա լրացուցիչ գունային այլ երանգներով ներկայացրել է պտուղների և ջրամանի ստվերային հատվածները: Պտուղների գույները կարծես այնպես են ընտրված, որպեսզի իր չափերով, ձևով, մուգ կապույտ գույնով ջրամանն իշխող դիրք զբաղեցնի նկարի հորինվածքում, այսինքն՝ ընդգծվի այդ առարկայի գեղեցկությունը:

Եզրակացություններ: Մասիսի հեղինակած առանձին նատյուրմորտները վկայում են նրա ստեղծած որոշակի նկարաշարերի մասին, որոնցից ոչ բոլորն են հասել մեզ և, որոնք նրա ստեղծագործական անդադար պրպտումների մասին են վկայում, նոր արտահայտչական հնարավորությունների անվերջ որոնման մասին: Այդ նկարաշարերի մեջ նա բազմիցս փոխել և տեղափոխել է բաղկացուցիչ առարկաները ու նրանց տեղերը, համադրումները: Նրա աշխատանքներում ոչ մի առարկա, թվում է, թե ինքնանպատակ չի հայտնվել և պատահական տեղում չի հայտնվել: Այդ գործերը իրենց գծանկարով և գունաշարով խորապես մտածված են և իմաստավորված և ոչ թե պատահական դիտարկումների արդյունք են հանդիսանում: Նկարչի այդ փորձերը մերթ ընդ մերթ դրական արդյունք են տվել և նա ստեղծել է առանձին, շատ հաջողված կտավներ: Մասիսի նատյուրմորտների քննությունը ևս մեկ անգամ համոզում է, թե ինչպիսի բծախնդրությամբ է ստեղծել նա իր գործերը: Ակնհայտ է, որ նա հատ- հատ ընտրել է անգամ իր նկարների շրջանակները: Կարելի է մինչև անգամ պատկերացնել, թե որքան ժամանակ է նա տրամադրել առանձին պատկերների բաղադրիչների ընտրությանն ու դասավորմանը առավել նպատակահարմար հորինվածքը ստանալու համար: Այդ բաղկացուցիչ մասերի կապակցվածությունը ստեղծելիս նա ոչ միայն իրերի համադրություն է ծրագրել, այլև դրանց գունային հարաբերությունները որոշել ու կազմակերպել: Ակնհայտ է, որ նա այդ ամենը սովորել է և իր ուսուցչից և նաև հանգամանորեն ուսումնասիրել ու վերլուծել վրձնի մեծ վարպետների ստեղծագործությունները: Նրա աշխատանքներում շատ լավ զգացվում է, որ նա քաջատեղյակ է նատյուրմորտի բնագավառում կուտակված համաշխարհային փորձին և հմտորեն օգտվում է գիտելիքների այդ զինանոցից:

Հարկ է հուսալ, որ սույն հոդվածը ոչ միայն պարզապես կծանոթացնի Մասիս Բախադորյանի գեղարվեստական ժառանգության մի մասը, այլև կնպաստի նրա անունը առհասարակ մոռացությունից դուրս բերելուն և նրա ստեղծագործությունների նկատմամբ հետաքրքրության ստեղծմանը:



Նկ. 1

Կարմիր վարդերով և դեղնա-նարնջագույն ծաղիկներով նատյուրմորտը



Նկ. 2

Ոսկեգույն ջրամանի մեջ դրված ծաղիկներով նատյուրմորտը



Նկ. 3.

Թեյնիկով և ապակե սափորով նատյուրմորտը



Նկ.4.

Մուգ կապույտ ջրամանով, սպիտակ սփռոցով և մրգերով նատյուրմորտը

Գրականության ցանկ

Ամերիկահայ նկարիչ, Տոքթ.Մասիս Ա. Պահատուր: “Կարօ Գեորգեան,Ամենուն տարեգիրքը”, Դ.տարի, Պէյրուք, 1957,էջ 304:

Մասիս Արմեն Բահադորյանի ընտանեկան տոհմածառը(անտիպ):

Մասիսի մորաքրոջ՝ Մարի Խանյանի դստեր՝ Աշխեն Մալխասյանի հուշերը(անտիպ):

Չուգասզյան Լ., Փուշման, 1986, (Փուշմանյան) Հովսեփ: «Հայկական Սովետական Հանրագիտարան», հատոր 12, Երևան, էջ 379:

Չուգասզյան Լ., 1986, Նկարչության բանաստեղծը.Հովսեփ Փուշման: «Սովետական գրականություն» հանդես, 11, էջ 123-129:

Չուգասզյան Լ., 1987, Հովսեփ Փուշմանը և գրողները: «Հայրենիքի ձայն», էջ 6-8:

Bahador Paula, 2016, Death notices. “Chicago Tribune”, p.7.

Dentist Drills on Art Technique.” Chicago Sunday Tribune”, 1959, March 15.

Dentist Signs Pictures with “Brush Name”,Paintings Displayed in Restaurant. ” Chicago Sunday Tribune”, 1959, March 15.

Hampar Kelikian, 1983, “New York Times”.

Helen Petrossian Assatourian (Sirvart’s daughter) memories (manuscript).

Khoren Leon Hussisian, 1985, My Life, Remembrances and Memories, June, p.200(manuscript).

Massis Armen Bahador, Born March 18, 1910, At Rest June 2,1999, brochure.

Regent League to Display Art Works Today.” Chicago Daily Tribune”, August 30, 1953.

Richard Seid, 1963, Painted Women of a Scientific Man.” Figure”, Quarterly, Fall edition, volume 26, p.48.

Dr. Hampar Kelikian — Remarkable Armenians.

Hampar Kelikian - armeniapedia.org.

hovsep pushman - Google Search.

Isaac Schour - Wikipedia.

This Old Palette: The Life and Death of Arnold Turtle.